

ՆՈՒՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իմ հոգու խորքում կա բոցկլտացող ու անշեջ աստղիկ: Գիշեր թե ցերեկ,
գարուն թե աշուն աստղիկն իմ փոքրիկ ուղեկցուն է ինձ: Ջերմացնում է նա
ձմեռվա ցրտին, անջրպետում է չարից, տհաճից:

Իմ հոգու խորքում դողդոջուն բոցով կա նաև մի մոմ, որի պսպղուն կրակը
փոքրիկ ջերմ լույս է տալիս: Տաճարի նման պահում է նա ինձ:

Իմ հոգու խորքում բյուրեղապակյա քնար կա քնքուշ, որից մեղմորեն
երգն է միշտ ծորում, իմ հոգու երգը, բիբերով անցնում, երկինք սլանում:

Եվ եթե հանկարծ դու ինձ դառնացնես՝ աստղս կմարի, մոմս կհանգչի,
քնարս հոգուս իսկույն կջարդվի ու երգս հոգուս կլռի հավետ ու ...

Ես չեմ լինի ես...

Ես ծաղկածիծաղ իմ ծաղիկ շորով
Ծաղիկ շաղ տվի ծաղիկներիդ մեջ,
Ու բոցավառվեց գարունքի բոցով

պարտեզի գողտրիկ:

Շուրջպար բռնեցի արեգակի հետ,
Մատներով կառչած նրա շողերից,
Ու ողողեցի արևի լույսով, արևի բոցով

պարտեզի գողտրիկ:

Անպիկին փոքրիկ ամուր գրկեցի,
Ամուր սեղմեցի իմ հոճվող հոգուն,
Որ առատորեն անձրևը տեղա քո գողտրիկ, գողտրիկ

պարտեզի վրա:

Ծիածանեցի երկրականարը,
Իրար խառնելով արև ու բուրմունք,
Փռելով գույնի տարերքի շքերթ

պարտեզում գողտրիկ:

Բայց... լռիր... հանկարծ դու ոչինչ չասես,
Բառերն գորշավուն դու չշռայլես,
Ջանկարծ չավիրես երազանքը իմ...

Որն ես ստեղծել եմ միայն ինձ համար,
իմ հոգու համար...